

## **ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ ՌԱՖԻԿ ԳՐԻԳՈՐՅԱՆՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԱՅՅՈՎ ԵՂԱՎ ՎԱՐՂԵՆԻՍ ՔԱՂԱՔՈՒՄ**

11.03.2015

Գեղարքունիքի մարզպետ Ռաֆիկ Գրիգորյանը մարտի 10-ին Վարդենիսի քաղաքապետարանում կատարեց քաղաքացիների ընդունելություն: Տեղում բավարարվեց մարզի ղեկավարին դրամական օգնություն տրամադրելու խնդրանքով ներկայացրած 4 քաղաքացիների դիմումները, կարգավորվեց նաև 1 քաղաքացու աշխատանքի հետ կապված խնդիրը: „ Շեն,, բարեգործական հասարակական կազմակերպության մարզային համակարգողի հետ Ռաֆիկ Գրիգորյանը քննարկեց կազմակերպության կողմից մարզի սոցիալապես անապահով համայնքներում իրականացված և իրականացվելիք ծրագրերի հարցը: Վարդենիսի քաղաքապետի հետ մարզի ղեկավարը քննարկեց քաղաքի մի շարք բազմաբնակարան շենքերի տանիքների վերանորոգման հետ կապված խնդիրը, իսկ մի շարք համայնքների ղեկավարների հետ՝ գարնան գյուղատնտեսական աշխատանքների վերսկսման, համայնքներում սեփական եկամուտների հավաքագրման գործընթացի, համայնքային բնույթի այլ խնդիրներ: